



Պատմության շրջադարձային բոլոր փուլերում, երբ քաղաքական և տնտեսական ղեկը փոխանցվել է նախորդ դասից՝ նոր, առավել առաջադեմ դասին, տեղի է ունեցել մշակութային վերելք: Հայաստանում ևս անցումային տարբեր փուլեր ուղեկցվել են մշակութային ու գիտակրթական ոլորտների վարթոնքով ու վարճացմամբ:

Նույնիսկ նախորդ դարի՝ 1915 թվականի ողբերգական իրադարձություններից հետո, ձեռք բերելով անկախություն, Հայաստանը սկսեց հետպիտե տոքի կանգնել: Հարյուրամյակներ անց վերականգնված ազգային պետությունը հնարավորություններ ստեղծեց գիտության, արվեստի, մշակույթի և բժշկության վարճացման համար:

Հայկական բժշկագիտության վարճացման մեջ իրենց մեծ ավանդն ունեցան Եվրոպայում ու Ռուսական կայսրությունում կրթություն ստացած և մասնագիտական կարիերան սկսած հայ գիտնականներն ու բժիշկները: Նրանց նախաձեռնությամբ էր տեղի ունենում նաև բժշկական հրատարակչությունը, այդ թվում նաև հայերենով:

Հայալեզու բժշկական գրականությունը միշտ էլ ունեցել է իր ընթերցողն ու հրատարակվել է աշխարհի տարբեր երկրներում: Տարբեր աղբյուրների հավաստմամբ՝ նախորդ դարասկզբում հրատարակվում էր շուրջ 30 հայկական բժշկական պարբերական, հրատարակման բավականին լայն

աշխարհագրությամբ՝ Կոստանդնուպոլսից (շուրջ 14 պարբերական) մինչև Բոստոն, Կահիրեից ու Ալեքսանդրիայից մինչև Վառնա և Սալոնիկ, Փարիզից մինչև Թիֆլիս ու Բաքու և այլն: Բժշկական հրատարակումների հիմնադիրների շարքում էին հայ անվանի բժիշկ-հայրենասերներ Լ.Տիգրանյանը, Վ.Արծրունին և այլք:

Խորհրդային Հայաստանում մեծ թափով վարճացան արդյունաբերության, մշակույթի, կրթության ու գիտության ոլորտները, բացառություն չէր նաև բժշկագիտությունը:

Բժշկագիտության ոլորտում ավելացավ գիտական ամսագրերի, տպագրված աշխատանքների քանակը, բացվեցին և ակտիվ գործունեություն ծավալեցին գիտահետազոտական ինստիտուտները, քաղաքային ու մարզային բժշկական հաստատությունները: Երևանում հիմնադրվեց Բժշկական համալսարանը, 1963 թվականին հիմնադրվեց Բժիշկների կատարելագործման ինստիտուտը, որը բժշկական կադրերի շարունակական կրթության առաջին դարբնոցն էր: Այդ տարիներին լույս տեսան մի քանի տասնյակ գիտական հանդեսներ ու ամսագրեր: Ընդհանուր առմամբ, այդ ընթացքում, տպագրվեցին 156 բժշկական գրքեր, որոնցից 59-ը՝ բժշկական բուհերի ուսանողների համար դասագիրք, 9-ը՝ բժշկական տեխնիկումների ուսանողների համար, 28 բժշկական ամսագիր, 60 գիտամեթոդական և այլ աշխատանքներ: Հատկանշական է նաև, որ նշված հրատարակումներից 10-ը լույս են տեսել ռուսերեն, իսկ մնացածը՝ հայերեն:

Այսպիսով՝ Խորհրդային Հայաստանի բժշկական մասնագետներին հասանելի դարձավ հայալեզու մասնագիտական գրականությունը:

Խորհրդային Հայաստանում հասարակարգային փոփոխություններին հաջորդեց կայացման նոր շրջանը՝ Հայաստանի երրորդ հանրապետության ծնունդը: Այս շրջանը ևս ուղեկցվեց օրենսդրական, տնտեսական, գիտակրթական բավմաթիվ բարեփոխումներով: Այս շրջանում Հայաստանն իր առաջին ինքնուրույն քայլերն էր կատարում կայացման ճանապարհին: Անկախության

սերունդը կանգնած էր ոչ միայն պետականաշինության, այլև տեխնոլոգիական բուն վարձագմանը համաքայլ ընթանալու մարտահրավերների առջև:

Ինչպես ապագայի նկատմամբ նոր հույսերով լցված Հայաստանը, այնպես էլ ողջ աշխարհը հայտնվեց լրջագույն մարտահրավերների առջև համավարակ, արտակարգ իրավիճակներ: Ցայտուն դարձավ, որ վարձագած տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մարդկանց միասին ու միաժամանակ աշխատելու նմանատիպ խնդիրների լուծման ուղղությամբ արագ տարածելով ձեռք բերած փորձառությունը ունենալով տարածական նոր ընկալումներ:

Միջապգային բժշկագիտական հանրությամբ, լինելով այս մարտահրավերների դեմ պայքարի առաջնագծում, անկասկած, մոբիլիզացրեց ու վերազնահատեց իր հնարավորությունները: Սա նոր խթան հանդիսացավ բժշկության մեջ տեխնոլոգիական նոր լուծումների, գիտական հետապոտությունների ավելացման ու նոր ուղղությունների վարձագման համար: Համակերպվելով ու հաշտվելով նոր իրականության հետ՝ անշուշտ, մարդկությունը կքաղի նաև այս էվոլյուցիոն շրջանի պոտոլները:

Այսօր թվայնացման ու տեխնոլոգիաների վարձագման գործընթացներն իրենց ապրեցությունն ունեն բժշկագիտության ոլորտի տարբեր ուղղությունների ձևավորման ու վարձագման վրա: Այս գործընթացներն ավելի դյուրին ու արագ դարձրեցին բժշկական վիճակագրության հավաքագրման և վերլուծության պրոցեսները, գրադարանների թվայնացումն ընդլայնեց ու հասանելի դարձրեց ապացուցահեն բժշկական գրականությունը, էլեկտրոնային կրթական հարթակներն ու հեռավար ուսուցման ծրագրերը հնարավոր դարձրեցին ուսումը հեղինակավոր համալսարաններում անկախ ուսանողների աշխարհագրությունից:

Առաջնահերթություն տալով ու գիտակցելով բուժաշխատողների շարունակական կրթության և Հայաստանում բժշկագիտության վարձագման կարևորությունը որակյալ կադրային ներուժի կազմավորման պրոցեսում, վճռականորեն տրամադրված լինելով ինտեգրվելու միջապգային գիտա-

բժշկական գործընկերության գործընթացներին՝ Առողջապահության ապգային ինստիտուտը (ԱԱԻ) շարունակում է սատարել բժշկական գիտական ներուժի վարձագմանն ու բազմապատկմանը:

Այդ ճանապարհին կարևոր է նաև Հայաստանում բժշկագիտության ասպարեպի աշխատանքների պատշաճ ներկայացման համար ունենալ ավելի մեծ ընտրություն, համապատասխան պատշաճ մակարդակ ապահովող հարթակներ, մասնավորապես գիտական հանդեսներ: Այդ իսկ նպատակով ԱԱԻ-ի կողմից հիմնադրվեց նոր **«Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդես»**-ը (ԱԲՀՀ), որը լինելու է ԱԱԻ-ի պաշտոնական գիտական պարբերականը: Ստեղծման նպատակն է ունենալ մի տպագիր հարթակ, որի էջերում տեղ կգտնեն հայաստանյան առողջապահության և բժշկագիտության նշանակալից առողջապահական և գիտաբժշկական աշխատանքներն ու նախագծերը: Այն կարտացոլի ոչ միայն ԱԱԻ-ի ամբիոնների գիտական ակտիվությունը, այլև հայաստանյան և արտասահմանյան բժշկագիտական միտքը:

Գիտությամբ ապրող այս հանդեսի խմբագրական կազմը վստահաբար նոր շունչ կտա ԱԱԻ գիտական կյանքին: ԱԲՀՀ-ի խմբագրական կազմը խանդավառ մասնագետների թիմ է՝ ի դեմս գլխավոր համախմբագիրներ՝ ԱԱԻ նյարդաբանության ամբիոնի վարիչ Սամսոն Խաչատրյանի և ԱԱԻ պլաստիկ և վերակառուցողական վիրաբուժության ամբիոնի դոցենտ Դավիթ Աբրահամյանի: Վերջիններս մարմնավորում են ԱԱԻ գիտական ներուժի սերնդափոխությունը, ունեն բարձր վարկանիշ ունեցող մի շարք միջապգային գրայնսվող ամսագրերում տպագրվելու և խմբագրելու փորձ:

Հուսով են նաև, որ հանդեսը կդառնա տրամաբանական շարունակությունն այն աշխատանքների, որոնք իրականացվել են տասնյակ տարիների ընթացքում նախկինում Բժիշկների վերապատրաստման ինստիտուտի, իսկ այնուհետև ԱԱԻ-ի կողմից և ուղղված են եղել մեր կրթական և գիտական մտքի վարձագմանը, հայաստանյան բժշկագիտության միջապգայնացմանը:

Ալեքսանդր Բազարյան

ՀՀ ԱՆ Առողջապահության ապգային ինստիտուտի տնօրեն